Հավելված 1
«««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական
և իրազեկման կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի
2016թ. հուլիսի 14-ի N 32 որոշման

Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ր Ծ Ր Ա Գ Ի Ր

«««ՆՈՐՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 5-ԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2016

Ի. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը ստեղծվել է ՀՀ կառավարության 28.07.2011թ. N 1059-Ն որոշմամբ՝ որպես «Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամ:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2016թ. մայիսի 10-ի N 31 որոշմամբ հիմնադրամը վերանվանվել է «««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի, ինչպես նաև հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որով հիմնադրամի նպատակները և

գործառույթները ընդլայնվել են՝ ընդգրկելով սոցիալական ապահովության ոլորտում տեղեկատվական համակարգերի մշակումը, սպասարկումն ու շահագործումը, սոցիալական ոլորտում իրականացվող բարեփոխումներին աջակցումը և իրազեկման ապահովումը:

Հիմնադրամի անվանման փոփոխության և նոր խմբագրությամբ կանոնադրության պետական գրանցումը ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից կատարվել է 2016 թվականի մայիսի 20-ին:

Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ կառավարության:

Հիմնադրամի գրանցման վկայականի համարն է՝ 222.160.47002:

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, որպես իր գործունեության գերակայություն, հռչակում է ժամանակակակից տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ տարաբնույթ բիզնես-գործընթացների ավտոմատացումը և հանրային իրազեկման աշխատանքների իրականացումը ինչպես սոցիալական պաշտպանության, այնպես էլ պետական կառավարման այլ ոլորտներում և մասնավոր հատվածում, որը կապահովի մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը, դրանց հասցեականությունը, արդյունավետությունը և թափանցիկությունը:

1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների, ինչպես նաև հանրային իրազեկման գործիքների կիրառումը ժամանակակից տնտեսակարգում գործարար հաջողությունների առանցքային երաշխիքն է: Այս իմաստով ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն»

հիմնադրամի ընդհանրական նպատակն է այդ գործիքների լայնամասշտաբ ներգրավումը և կիրառումը պետական և մասնավոր հատվածը ներկայացնող գերատեսչությունների և ընկերությունների ՏՀՏ ենթակառուցվածքում՝ դառնալով միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանող կազմակերպություն, որը կունենա անհրաժեշտ պայմաններին համապատասխանող ստեղծագործ և փորձառու աշխատակազմ և կլինի վստահելի, մրցունակ և շարունակական զարգացում ապահովող գործընկեր:

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի գործունեության հիմքում ընկած են Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգում գործող ենթակառուցվածքների զարգացմանն ու արդյունավետ գործունեությանը աջակցելու, համակարգի առջև դրված խնդիրների լուծմանը միտված՝ նոր էլեկտրոնային ծառայությունների և համակարգերի ստեղծման և կատարելագործման, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման համար խթաններ ստեղծելու նպատակները, մասնավորապես՝

1. Դառնալ սոցիալական պաշտպանության ոլորտի բիզնես գործընթացների ավտոմատացման և ՏՀՏ ենթակառուցվածքի ներդրման և արդիականացման առաջատարը տարածաշրջանում:
2. Ձևավորել նպաստավոր միջավայր ներքին և արտաքին գործարար կապերի հաստատման և ներդրումային հոսքերի ներգրավման համար:
3. Ապահովել սոցիալական պաշտպանության համակարգի տեղեկատվական ենթակառուցվածքի բնականոն գործունեությունը և շարունակական արդիականացումն ու կատարելագործումը՝ կիրառելով տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում միջազգային և տեղական լավագույն փորձը

4. Մշակել և ներդնել սոցիալական ապահովության ծառայությունների մատչելիությունը ապահովող էլեկտրոնային ծառայություններ՝ շարունակաբար ընդլայնելով այդ ծառայությունների շրջանակը և ապահովելով դրանց հասանելիությունը առավել լայն թիրախային խմբերի (այդ թվում՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ)

5. Նպաստել պետություն-մասնավոր հատված փոխգործակցության ամրապնդմանը, մասնավոր և պետական հատվածների արդյունավետ համագործակցության և գործընկերային կապերի զարգացմանը՝ հիմքում ունենալով Հայաստանի Հանրապետության բնակչությանը մշտապես բարելավվող ծառայությունների մատուցման գերակա նպատակը:

6. Ստեղծել բարենպաստ միջավայր՝ Հայաստանի Հանրապետությունում սոցիալական ապահովության բնագավառում կիրառվող տեխնոլոգիական լուծումների արտահանման համար՝ մշակելով և կյանքի կոչելով պահանջարկից բխող և, միևնույն ժամանակ, միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանող նախագծեր,

7. Աջակցել Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացվող բարեփոխումներին՝ նորարարական գաղափարների, դրանց իրագործման համար անհրաժեշտ լուծումների և գործիքակազմի առաջադրման և փաստացի իրագործման միջոցով:

8. Ուսումնասիրել և տեղայնացնել սոցիալական ապահովության բնագավառում կիրառվող տեխնոլոգիական լուծումների միջազգային փորձը՝ բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների որակն ու արդյունավետվությունը բարձրացնելու նպատակով:

9. Մշակել և իրագործել հանրային հաղորդակցության արշավներ, իրազեկման միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարություններ՝ նպաստելով Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության համակարգի և կուտակային կենսաթոշակային համակարգի միջոցով շահառուներին տրամադրվող

ծառայությունների վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, իրականացվող բարեփոխումների և մատուցվող ծառայութունների նկատմամբ հասարակության վստահության ու դրական վերաբերմունքի դինամիկ և կայուն աճին:

10. Տրամադրել խորհրդատվական և մասնագիտական աջակցություն բնակչության տարբեր շերտերին՝ իրականացնելով ուսումնական ծրագրեր, մշակելով, տպագրելով և թիրախային խմբերի շրջանում տարածելով հանրամատչելի տեղեկատվական և իրազեկման նյութեր, կիրառելով առցանց գործիքակազմ, այդ թվում՝ խթանելով տեխնոլոգիական լուծումների ստեղծման ներքին կարողությունների զարգացումը: Գործարկել և շարունակաբար կատարելագործել Հայաստանի Հանրապետության սոցիալական ոլորտի «114 թեժ գիծ» ծառայությունը և www.epension.am միասնական սոցիալական պորտալը, այդ թվում՝ «Առցանց խորհրդատու» ծառայությունը՝ տրամադրելով ամբողջական և լիարժեք խորհրդատվություն (այդ թվում՝ իրավական) սոցիալական պաշտպանության համակարգում և կուտակային կենսաթոշակային բաղադրիչում քաղաքացիների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ և նպաստելով բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների բարելավմանն ու կատարելագործմանը՝ 114 թեժ գծի դերի բարձրացման միջոցով: ,

11. Ստեղծել բանիմաց, փորձառու և նպատակասլաց մասնագետներից բաղկացած աշխատակազմ, որը կդառնա հիմնադրամի առաջընթացի գլխավոր երաշխավորը:

Նշված նպատակներին հասնելու համար ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի առջև դրված խնդիրներն են.

1. Ապահովել սոցիալական ապահովության բնագավառում համակարգչային ու ցանցային տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրումը, շահագործումն ու սպասարկումը,

2. Նախագծել, ձևավորել և կառավարել սոցիալական ապահովության բնագավառի տեղեկատվական հոսքերը,

3. Ուսումնասիրել սոցիալական ապահովության ոլորտի տեղեկատվական համակարգերի նախագծման և կառավարման միջազգային առաջավոր տեխնոլոգիաների ներդրման փորձը, իրականացնել Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության բնագավառում դրանց տեղայնացումն ու կիրառումը,

4. Մշակել և իրականացնել տեղեկատվական համակարգերի զարգացման ծրագրեր՝ խթանելով սոցիալական ապահովության բնագավառի տեղեկատվական ենթակառուցվածքների շարունակական զարգացումն ու հզորացումը,

5. Խթանել տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում Հայաստանի Հանրապետության ներքին կարողությունների զարգացումը՝ լավագույնս օգտագործելով Հիմնադրամի ներքին ռեսուրսները բիզնեսի առաջխաղացման համար նորարական լուծումներ ստեղծելու, ընկերությաան ՏՏ արտադրանքը շուկայում ներկայանալի դարձնելու և իրացնելու միջոցով,

6. Որդեգրել տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում հանրության առանձին խմբերի համար շարունակական ուսուցում ապահովելու քաղաքականություն՝ նպաստելով ՏՏ բնագավառում Հայաստանի Հանրապետության ներուժի զարգացմանն ու ամրապնդմանը, ոլորտի համար բարձր մասնագիտական կարողություններով զինված կադրերի պատրաստմանը,

7. Ապահովել Հայաստանի Հանրապետության բնակչության իրազեկվածությունը սոցիալական պաշտպանության համակարգում իրականացվող բարեփոխումների և ընթացիկ ծրագրերի, դրանց ներքո հասարակության տարբեր խմբերին տրվող իրավունքների և արտոնությունների վերաբերյալ՝ նպաստելով այդ

իրավունքների լիարժեք իրացմանը և բնակչության շրջանում սոցիալական պաշտպանության համակարգի նկատմամբ վստահության բարձրացմանը,

8. Նախագծել և իրականացնել ռազմավարական ծրագրեր, իրազեկման և հանրային հաղորդակցության արշավներ՝ բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացման, կուտակային կենսաթոշակային բաղադրիչի գործողության մեխանիզմները հասկանալի դարձնելու և համակարգի նկատմամբ հանրային վստահությունը մեծացնելու ուղղությամբ,

9. Հզորացնել բնակչության համար ստեղծված տեղեկատվական ենթակառուցվածքները՝ ընդլայնելով սոցիալական ոլորտի «114 թեժ գիծ» ծառայության և www.epension.am միասնական սոցիալական պորտալի տեխնիկական և բովանդակային հնարավորությունները, ամրապնդել Թեժ գծի նկատմամբ հանրային վստահությունը, իրագործել www.epension.am պորտալը որպես ֆինանսական գիտելիքի ստացման հայալեզու կրթական հարթակ կայացնելու տեսլականը:

10. Հիմնադրամի աշխատակիցների համար ապահովել արդարացի վարձատրություն, մասնագիտական շարունակական աճ և առողջ աշխատանքային հարաբերություններ՝ մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից մեթոդաբանությանը համապատասխան:

1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կանոնադրությամբ,

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Հիմնադրամի ներքին կանոնակարգերով:

Միաժամանակ, ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 582-Ն որոշման մեջ նախատեսվող փոփոխության համաձայն, 2016 թվականի դեկտեմբերի 1-ից ճանաչվելու է սոցիալական աջակցության տեղեկատվական շտեմարանների սպասարկման և շահագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած կազմակերպություն:

Այսինքն, ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին է վերապահվելու սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական ենթակառուցվածքը շահագործելու և սպասարկելու գործառույթը:

1.3. Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի աշխատակազմում մարդկային ռեսուրսները կներգրավվեն՝ համաձայն հիմնադրամի մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության՝ նպատակ ունենալով ապահովել հիմնադրամի կայուն գործառնությունը և շարունակական զարգացումը:

1. Նախատեսվում է, որ Հիմնադրամը կունենա միջինում 100 աշխատակից՝ կախված իրականացվող ծրագրերի համար պահանջվող մարդկային ռեսուրսներից:

2. Աշխատակիցները մասնագիտացված կլինեն հետևյալ ուղղություններում՝ ծրագրավորում, ցանցային ադմինիստրացիա, համակարգչային միջոցների տեխնիկական սպասարկում, ծրագրերի կառավարում, ուսուցում, վերապատրաստում և համակարգերի ներդրում, տեղեկատվական համակարգերի սպասարկում և շահագործում, վերլուծություն, հասարակայնության հետ կապեր (PR) և մարկետինգ, հրատարակչական գործ, ֆինանսներ և հաշվապահություն, գնումների կազմակերպում և իրականացում:

1.4. Կազմակերպության գործունեության ոլորտը

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի գործունեության ոլորտները բխում են հիմնադրամի գործունեության նպատակներից: Հիմնադրամի գործունեության ոլորտներն են.

1. Տեղեկատվական տեխնոլոգիաներ,
2. Հասարակայնության հետ կապեր (PR), հաղորդակցություն և մարկետինգ, ներառյալ թվային տեխնոլոգիաների միջոցով ստեղծված գործիքակազմը,
3. Ուսուցում և վերապատրաստում,
4. Վերլուծություններ և հետազոտություններ,
5. Հրատարակչություն:

Հիմնադրամը նաև նախատեսում է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն հետևյալ ուղղություններով.

1. Ուսուցման և վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում,

2. Հաղորդակցության արշավների, մարքեթինգային և PR ծրագրերի նախագծում և իրականացում,

3. Կիրառական և սոցիոլոգիական հետազոտությունների իրականացում, գիտահետազոտական ծրագրերի մշակում և իրականացում,

4. Մասնագիտական գրականության մշակում և տարածում, այդ թվում՝ դիզայներական և հրատարակչական ծառայությունների մատուցում,

5. Համակարգչային լոկալ և գլոբալ ցանցերի, ինչպես նաև սերվերային համալիրների նախագծում, կառուցում և սպասարկում,

6. Համակարգչային և այլ տեխնիկական սարքավորումների սպասարկում, վերանորոգում,

7. Պորտալների և վեբկայքերի նախագծում, ստեղծում և սպասարկում, գործող վեբկայքերի կատարելագործում, ինչպես նաև համացանցային հոսթինգի տրամադրում,

8. Միջազգային գործընկերների կողմից ստեղծված SS արտադրանքի տարածում տեղական շուկայում (Distribution),

9. Այլ:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

2.1. Ծրագրի նպատակը

Սույն ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել.

1. Սոցիալական պաշտպանության բնագավառի գերատեսչության (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն) և դրա ենթակայությամբ գործող կառույցների տեղեկատվական համակարգերի ու շտեմարանների սպասարկման և շահագործման, ինչպես նաև՝ ըստ պահանջի նորերը նախագծելու անհրաժեշտությունը,

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014-2017 թվականների ծրագրին համահունչ՝ սոցիալական պաշտպանության ոլորտում քաղաքացիների սոցիալական իրավունքի լիարժեք ու ամբողջական իրացման պայմանների ստեղծման, գործող ենթակառուցվածքների կատարելագործման նպատակը,

3. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման պետական քաղաքականության նպատակադրումը, որն ամրագրված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014-2017 թվականների ծրագրում,

4. Երկրում բարձր գործարար ակտիվության և կայուն ներդրումային հոսքեր ներգրավելու համար նպաստավոր միջավայրի ձևավորման հարցում Հայաստանի Հանրապետության կառավարությանը աջակցություն ցուցաբերելու նպատակադրումը՝ մրցունակ նախագծեր և ռազմավարական ծրագրեր մշակելու, դրանք պոտենցիալ դոնորներին առավելագույն արդյունավետությամբ ներկայացնելու և ֆինանսական և այլ նյութական ռեսուրսներ ներգրավելու միջոցով:

5. Սոցիալական պաշտպանության բնագավառի գերատեսչության (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն) և դրա ենթակայությամբ գործող կառույցների համակարգչային տեխնիկական սպասարկման անհրաժեշտությունը,

6. Հայաստանի կենսաթոշակային բարեփոխումներին աջակցման շրջանակում՝ բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը միտված ծրագրերի մշակման և իրականացման պետական մոտեցումը

7. Հայաստանի բնակչության կողմից իրենց սոցիալական իրավունքների վերաբերյալ ամբողջական և լիարժեք տեղեկատվության տիրապետման, մասնագիտական խորհրդատվության ստացման համար ստեղծված համապատասխան ենթակառուցվածքների («114 թեժ գիծ» ծառայություն և www.epension.am սոցիալական պորտալ) կատարելագործման ու հզորացման, բնականոն գործունեության ապահովման նպատակը:

2.1. Ծրագրի իրականացման համար ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 1 տարում (2016թ. – 2017թ.) կազմակերպության գործունեության կազմակերպման համար ֆինանսական աղբյուրներ են դիտարկվում՝

1. ՀՀ պետական բյուջեից հատկացվող ֆինանսավորում՝ սոցիալական ապահովության ոլորտի տեղեկատվական համակարգերի սապասարկման և շահագործման, նոր համակարգերի նախագծման, ստեղծման և հետագա սպասարկման, համակարգչային տեխնիկական սպասարկման և այլ հարակից գործառույթների իրականացման համար,
2. ՀՀ պետական բյուջեից հատկացվող ֆինանսավորում՝ կենսաթոշակային համակարգի հանրային իրազեկման համար՝ նախատեսված ֆինանսական գրագիտության և իրազեկման ծրագրերի նախագծման և իրականացման, «114 թեժ գիծ» ծառայության և www.epension.am սոցիալական պորտալի վարման համար պահաջվող՝ գործառնական ծախսերի համար,
3. Այլ պոտենցիալ ֆինանսավորում՝ միջազգային և տեղական դոնորներից՝ Հիմնադրամի կանոնադրական նպատակների իրագործման համար:

2.2. Ծրագրի իրականացման ժամկետները

Ծրագրի խնդիրների և նպատակների իրականացումն անժամկետ է:

2.3. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 5 տարում ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Սոցիալական պաշտպանության ոլորտում գործող տեղեկատվական համակարգերի ստանդարտացում, այսինքն՝ համակարգերի հիմքում ընկած տեխնոլոգիաների, կիրառվող ծրագրավորման լեզուների ու տեղեկատվական շտեմարանների բերում մեկ միասնական ձևաչափի, ինչը հնարավորություն կտա ապահովել այդ համակարգերի միջև տվյալների ինքնաշխատ փոխանակումն ու դրանց կիրառումը:

2. Սոցիալական պաշտպանության ոլորտում գործող տեղեկատվական համակարգերի շարունակական արդիականացում, գործառութային ենթահամակարգերի կատարելագործում և զարգացում:

3. Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող նոր ծրագրերի ներդրմամբ պայմանավորված նոր տեղեկատվական համակարգերի մշակում և ներդրում:

4. Սերվերային համալիրի շարունակական արդիականացում՝ ժամանակակից պահանջներին համապատասխան:

5. ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների համակարգչային սարքավորումների և այլ տեխնիկական միջոցների արդիականացում:

6. Հանրային հաղորդակցության և PR արշավների, նախաձեռնությունների մշակում և իրագործում՝ սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող համակարգային բարեփոխումները և դրանց հիմնականն ուղերձները բնակչությանը ներկայացնելու, համակարգի նկատմամբ վստահությունը բարձրացնելու նպատակով,

7. Հայաստանում ներդրված կուտակային կենսաթոշակային համակարգի շրջանակում բնակչության ֆինանսական գրագիտությունը բարձրացնելուն միտված նախագծերի, ներառյալ հատուկ կրթական ծրագրերի մշակում և իրականացում, այդ նպատակով միջազգային փորձի ուսումնասիրություն և լավագույն օրինակների տեղայնացում,

8. Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության համակարգի և դրա միջոցով քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների վերաբերյալ խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում շահառուներին «114 թեժ գիծ ծառայության» և www.epension.am սոցիալական պորտալի միջոցով,

9. Հիմնադրամի իրազեկման և կրթական նպատակներից ելնելով՝ հանրամատչելի տեղեկատվական նյութերի մշակում և տարածում, որը ներառում է նաև մամուլի համար հատուկ հրապարակումների պատրաստմանը աջակցության ցուցաբերում, իրազեկման հոլովակների համար սցենարային պլանների մշակում, տարբեր թիրախային խմբերի համար (դպրոցականներ, ուսանողներ, վարձու աշխատողներ, գործատուներ) ձեռնարկների, ուսումնական նյութերի պատրաստում և հանրայնացում,

10. Հայաստանի սոցիալական ոլորտի բարեփոխումների և ընթացիկ ծրագրերի տեսանելիության բարձրացում՝ իրազեկման գործիքների լայն կիրառման, ՋԼՄ-ների հետ համագործակցության, տեղեկատվական տեխնոլոգիաների կողմից առաջարկվող լուծումների կիրառման միջոցով,

11. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014-2017 թվականների ծրագրին համահունչ՝ ՀՀ տնտեսության արդիականացման և կարիքների բավարարման նպատակներին հասնելու համար, երկրում տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի զարգացման խթանում՝ ներքին կարողությունների հզորացման և արտաքին շուկայի հետ հարաբերությունների զարգացման ու ամրապանդման միջոցով

12. Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների բնագառավում երկրի ներքին կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման շրջանակում՝ «Այ Բի Էմ» նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի և տարածաշրջանային ներկայացուցչության հիմնում,

13. Ակտուարական կենտրոնի հիմնում՝ երկարաժամկետ ֆինանսական և այլ կանխատեսումներ, գնահատումներ և վերլուծություններ իրականացնելու համար, որը կարևոր դերակատարում կունենա ինչպես պետական քաղաքականության տարբեր ոլորտներում (օրինակ՝ կուտակային կենսաթոշակային համակարգում) ռիսկերի գնահատման, ապագային միտված վերլուծությունների կատարման, վիճակագրության վերհանման և համապատասխան խորհրդատվության տրամադրման համար, այնպես էլ ուղղված է լինելու մասնավոր շուկաներում ներկայանալուն և երկրում ակտուարական ոլորտը կայացնելուն և հզորացնելուն: Ուսուցման և վերապատրաստման ծրագրերի, այդ թվում՝ մասնագիտական ձեռնարկների մշակում,

14. Այլ հարակից միջոցառումներ՝ ելնելով Հիմնադրամի կանոնադրական նպատակներից:

2.4. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրի իրականացման արդյունքում ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը նախատեսում է ապահովել՝

1. Հայաստանի սոցիալական ապահովության ոլորտում գործող տեղեկատվական համակարգերի ու շտեմարանների անխափան աշխատանքը և ըստ նշանակության գործարկումը, ըստ պահանջի՝ նոր համակարգերի, շտեմարանների ձևավորումը,

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ենթակառուցվածքների համակարգչային միջոցների տեխնիկական սպասարկումը,

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանը երկրում տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի զարգացմանը գործուն աջակցությունը,

4. Բնակչության լայն շերտերի համար մատչելի էլեկտրոնային սոցիալական ծառայությունների ստեղծումը և գործարկումը,

5. «114 թեժ գիծ» ծառայության և www.epension.am սոցիալական պորտալի կատարելագործումը և հզորացումը,

6. բնակչության շրջանում ֆինանսական գրագիտության բարձրացումը, սոցիալական ոլորտում, այդ թվում՝ կենսաթոշակային համակարգում իրականացվող բարեփոխումների և ընթացիկ ծրագրերի վերաբերյալ հանրային բարձր իրազեկվածությունը,

7. Սոցիալական պաշտպանության համակարգի, ներառյալ կենսաթոշակային բարեփոխումների հանրային հաղորդակցության երկարաժամկետ արշավի նախագծումը և իրականացումը,

8. Ուսուցման և վերապատրաստման ծրագրերի մշակումն ու իրականացումը տարբեր թիրախային խմբերի համար,

9. Հայաստանում ակտուարական կենտրոնի հիմնումը և կայացումը, որն էական դերակատարում է ունենալու Հայաստանի Հանրապետությունում ակտուարական ոլորտի զարգացման հարցում:

Գործարար ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է կյանքի կոչել նաև 2014 թվականի դեկտեմբերի 2-ին «Այ Բի Էմ» ընկերության հետ ստորագրված երկարաժամկետ համագործակցության հուշագիրը՝ կազմակերպության հենքի վրա տեխնոլոգիական տարածաշրջանային կենտրոն ստեղծելու միջոցով:

Ընդ որում, նախատեսվում է, որ կազմակերպությունը լինելու է «Այ Բի Էմ»-ի հիմնական գործընկերը տարածաշրջանում, որին ապագայում վերապահվելու է «Այ Բի Էմ»-ի տեխնոլոգիաները տարածաշրջանային շուկա արտահանելու և տեղայնացնելու գործառույթը:

Գործընթացը անմիջականորեն փոխկապակցված է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 22-ի N 47 արձանագրային որոշմամբ սահմանված՝ սոցիալական պաշտպանության ոլորտի միասնական տեղեկատվական համակարգի ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին՝ հաշվի առնելով «Այ Բի Էմ» ընկերության փորձառությունը համանման պրոյեկտներ իրականացնելու գործում:

Արդյունքում, Հիմնադրամի առաջիկա 5 տարիների գործունեության արդյունքում ակնկալվում է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման, միջազգային և տեղական լավագույն փորձի ուսումնասիրության և տեղայնացման միջոցով էապես բարձրացնել Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության համակարգի արդյունավետությունը, աջակցել ՀՀ կառավարությանը Հայաստանում տեխնոլոգիական առաջընթացի ուղղությամբ ծրագրերի նախագծման և իրականացման աշխատանքներում, նպաստել երկրում բիզնես գործընթացների ակտիվացմանը և կայուն զարգացմանը:

Գործարար ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության ծրագրին, որի համաձայն նախատեսվում է պետություն-մասնավոր հատվածի համագործակցության սկզբունքի համաձայն, երկկողմ պարտավորությունների սահմանման միջոցով ժամանակակից տեխնոլոգիաների ներգրավմամբ, նպաստել միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանող հայկական ընկերությունների կայացմանը:

Ակնհայտ է, որ այս ձևաչափով «Այ Բի Էմ» ընկերության ներկայացվածությունը տեղեկատվական տեխնոլոգիաների հայաստանյան շուկայում էապես նպաստելու է ոլորտի զարգացմանը, ինչպես նաև խթանելու է նոր տեխնոլոգիաների մուտքը ՀՀ՝

իր հետ բերելով ոլորտի մասնագետներին ներկայացվող կրթական և մասնագիտական նոր չափորոշիչներ:

Սա նշանակում է SS ոլորտում կադրերի արհեստավարժության բարձրացում նոր մակարդակի, ինչն ապահովելու է մրցակցային առավելություններ հայկական SS արտադրանքի համար: